ԿԱՐԾԻՔ

Վազգեն Վահանի Հախոյանի «Վանանդի (Կարսի) և Շիրակի նահանգներում թուրքական բանակի իրագործած զանգվածային հանցագործությունները (1920-1921 թթ.)» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության պատմության հոլովույթում քեմալական բանակի 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբին Հայաստանի Հանրապետությունում իրականացրած ցեղասպանությունը ունի էական առանձնահատկություն: Նախ՝ ցեղասպանության զոհերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն էին, իսկ կոտորողները թուրքական բանակի զինվորները. ի տարբերություն ցեղասպանության մյուս դրվագների, երբ թուրքական պաշտոնական պատմագրությունը բերում է մտացածին հիմնավորումներ, թե իբր աքսորյալ հայերի քարավանների վրա հարձակվել են հրոսակներ, հանցագործներ, այլ ոչ թե պետական կառույցների՝ ոստիկանության կամ բանակի զորաջոկատներ, այս պարագան լիովին ուրիշ է և փաստերն ակներև: Մյուս հանգամանքը այն է, որ սա նաև ռազմական հանցագործություն է, քանի որ այլ պետության տարածք գրաված քեմալական բանակը փաստացի իրագործել է մարդկության դեմ հանցագործություն անզեն և խաղաղ բնակիչների հանդեպ, այլ երկրի քաղաքացիների հանդեպ: Վստահ եմ, որ այս հանգամանքները նաև իրավական առումով այլ լույսի ներքո կարող են ներկայացնել Հայոց ցեղասպանության խնդիրը:

Ահա այս կարևոր հարցերի քննության է նվիրված Վազգեն Հախոյանի թեկնածուական ատենախոսությունը, որը իրականացվել է արխիվային նյութերի և փաստաթղթերի, հուշագրությունների, հիմնականում հայերեն ուսումնասիրությունների, վերապրածների և ականատեսների ու նրանց ժառանգների բանավոր պատմությունների, դաշտային աշխատանքների հիման վրա: Ատենախոսությունը բաղկացած է երեք գլխից, որից առաջինում ներկայացվում է Վանանդի (Կարսի) նահանգի հայ բնակչության կոտորածները 1920-1921

թվականներին՝ բնակչության տեղափոխության, շրջանի հայաթափման, թուրքական բանակի իրականացրած թալանի համապատկերում: Երկրորդ գլխում քննության են առնվում թուրքական բանակի իրականացրած կոտորածները Շիրակի նահանգում: Իսկ երրորդ գլուխը նվիրված է Հայոց ցեղասպանության ավելի մասշտաբային փուլի և 1920-1921 թվականների համեմատությանը, թուրքական պետական քաղաքականության և գործելաոճի զուգահեռներին, որի շրջանակներում ուշադրություն է դարձված կոտորածներին թուրքական բանակի ներգրավվածության խնդրին:

Ատենախոսության արժանիքներից կարելի է համարել հեղինակի իրականացրած դաշտային-հետազոտական, բանահավաքչական աշխատանքները վերապրածների և նրանց ժառանգների շրջանում, նրանց փոխանցած բանավոր պատմությունների հիման վրա կազմված աղյուսակները, ինչպես նաև սպանդի հետևանքները և իրողությունը ապացուցող փաստերի՝ մասունքների, խմբակային թաղումների, պարկուճների մասին հավաստող տվյալներ:

Աշխատանքը նվիրված է գիտական և քաղաքական առումով գերարդիական թեմայի և այդ մասին ատենախոսը բավական հիմնավոր ներկայացնում է ներածության մեջ՝ զուգահեռներ տանելով արդի գործընթացների հետ: Հստակ են շարադրված նաև ատենախոսության նպատակներն ու խնդիրները, որոնց ուղղությամբ աշխատանքում արված են հետևողական վերլուծություններ: Թուրքական բանակի գործողությունները Հայաստանի Հանրապետությունում հստակ բնութագրվում է ցեղասպանական, քանի որ անգամ բանակցությունների փուլում շարունակել են իրականացնել ռազմական հանցագործություններ, ավերածություններ, խաղաղ բնակչության կոտորածներ և բռնություններ, որի մասին հստակ ցուցումներ են ստացվել քեմալական իշխանությունների կենտրոնից՝ Անկարայից: Սա վկայությունն է այն փաստի, որ քեմալական իշխանությունները ռազմական գործողությունների անվան տակ իրականում իրականացրել են ցեղասպանություն, պետության ենթակառուցվածքների ոչնչացման մշակված ու

թիրախավորված քաղաքականություն: Ընդհանրապես այս և նմանատիպ օրինակները շատ լավ պատկերացում են կազմում նաև ներկայումս թուրք-ադրբեջանական տանդեմի գործելաոճի մասին, որում ըստ էության փոփոխություն չկա և վերջին դեպքերը դրա խոսուն ապացույցներից են:

Ատենախոսության մեջ համակարգված նաև ներկայացվում է հայ բնակչության վիճակը, դեմոգրաֆիկ, վերաբնակեցման և այլ խնդիրներ, որոնք տրվում են համեմատական վերլուծության միջոցով: Հեղինակը ուշադրություն է դարձրել մշակութային եղեռնի բացահայտ դրսևորումներին, որոնք տեղ են գտել նաև 1920-1921 թթ. ցեղասպանական գործողությունների ընթացքում:

Աշխատանքի հետ կապված ունենք որոշ դիտարկումներ և առաջարկներ.

1. Ատենախոսության մեջ բավական շատ է տեղ տրված նկարագրություններին. թեմայի բնույթը իհարկե ենթադրում է սպանությունների, բռնությունների նկարագրություններ, սակայն կարելի էր դրանց քանակը որոշակիորեն նվազեցնել և ավելի շատ ուշադրություն դարձնել խորքային խնդիրների քննական վերլուծության վրա:

2. Ատենախոսության մեջ այլալեզու աղբյուրներ, ուսումնասիրություններ գրեթե չկան. առկա են ընդամենը երեք անգլերեն, մեկ ռուսերեն նյութեր: Կարծում ենք, որ հիշյալ թեմայի հետ կապված օգտակար կլիներ օտար հեղինակների, այդ թվում և թուրք ուսումնասիրողների աշխատանքները, որոնցում կարելի էր դիտարկել նաև պատմակեղծարարության ընդգծված դրսևորումներ:

3. Ցանկալի կլիներ ավելի շեշտված առանձնացնել 1920-1921 թթ. Հայաստանի Հանրապետությունում իրականացված ցեղասպանության գլխավոր դերակատարներին, ղեկավար անձանց և փորձել դիտարկել նրանց ընդգրկվածության հարցը 1915-1916 թվականների գործողություններին, որով ավելի պարզ կդառնար երիտթուրքեր-քեմալականներ շարունակականության հարցը:

4. Աշխատանքը կշահեր, եթե ներկայացվեր տվյալ ժամանակաշրջանի տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական զարգացումների ավելի լայն ու խորը ներկապնակը, որի համապատկերում էլ ավելի տեսանելի ու հստակ կդառնար քեմալականների գործողությունների տրամաբանությունը:

Նշված դիտողությունները, սակայն, էականորեն չեն ազդում աշխատանքի ընդհանուր բնույթի վրա. այն իրականացված է գիտական պատշաճ մակարդակով, արդիական է և պարունակում է գիտական նորույթ: Թեմայի վերաբերյալ ատենախոսի հրապարակված հոդվածները և սեղմագիրը արտացոլում են աշխատանքի դրույթները: Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳ կոմիտեի պահանջներին, իսկ ատենախոսը՝ Վազգեն Վահանի Հախոյանը արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի՝ Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռուբեն Հովհաննեսի Մելքոնյան

10.09.2024 թ.

Ռուբեն Մելքոնյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ գիտքարտուղար՝ բ.գ.թ., դոցենտ Մ. Հովհաննիսյան